Հետազոտական աշխատանք

Տիտղոսաթերթ

Կազմակերպության տվյալներ ● Անվանում, հասցե ● Տնօրեն ● Էլ.հասցե ● Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Անահիտ Չոմարյան anahitchomaryan79@gmail.com +37493181884
Հետազոտության թեմա/վերնագիր ● Հետազոտության թեմա	Գրական ունկնդրումն որպես ուշադրության միջոց 1-ին դասարանում Հարց Արդյո՞ք գրական ունկնդրումը նպաստում է ուշադրության զարգացմանը 1-ին դասարանում
Ուսուցչի տվյալներ ● Ա.Ա.Հ. ● Մասնագիտություն ● Հեռախոս ● Էլ. հասցե ● Դասավանդվող առարկաներ ● Դասարաններ	Թովմասյան Ծովինար Վալոդիայի մանկավարժ tovmasyannanar42@gmail.com դասվար +37491188665
Ուսումնական հաստատության տվյալներ ● Անվանումը, հասցե ● Հեռախոս ● էլ. հասցե (տնօրենության) ● Web կայքի հասցե	Երևանի Վահան Տերյանի անվան թիվ 60 հիմնական դպրոց Ք. Երևան Տիգրան Մեծ 42 010550070 teryan60@mail.ru yerevan60.schoolsite.am

Բովանդակություն

Ներածություն……3

Գրականության ակնարկ…….

Հետազոտության ընթացքը…….

Եզրակացություն……

Օգտագործված գրականության ցանկ……..

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	Աշխատանքի նպատակն է , թե որքանով է նպաստում խոսքի զարգացումը գրադարաններ այցելելիս: Գրական ունկնդրումը երեխային ճանաչողության գործընթացը, տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները զարգացնելու միջոց է: Գրական ունկնդրման ժամանակ ուսուցիչը կարդում է գրական ստեղծագործություններ, իսկ սովորողը, հասկանալով ընթերցանությունը, ակտիվացնում է մտածական գործընթացները, ինչը կարևոր նախապայման դառնում է երեխաների արդյունավետ ուսուցման և ուսումնառության համար: Գրական ունկնդրման պահանջներն առաջին դասարանում հետևյալն են. * Կարողանան ունկնդրել * Հարցերի օգնությամբ վերարտադրել ուսուցչի կարդացած կամ պատմած փոքրածավալ հեքիաթները * կարողանալ պատմել ըստ ունկնդրածի, տեսածի, հիշողության, նկարի և այլնի: Գրական ունկնդրման ժամերին սովորողների բարոյական

դաստիարակության խնդիրների լուծման գլխավոր պայմանը սովորողների՝ գրական ստեղծագործությունը խորությամբ հասկանալու, վերլուծելու կարողությունն է: Մայրենի լեզվի դասերին սովորողները ուսուցչի ղեկավարությամբ կարդում են գրական ստեղծագործություններ: Ստեղծագործական գեղագիտական և բարոյական արժեքներն ընկալելու համար անհրաժեշտ է, որ

* խորհեն ընթերցածի շուրջ,
* ապրումակցեն հերոսներին,
* գնահատեն նրանց արարքները,
* Իմաստավորեն նրանց խնդիրները.
* համեմատեն իրենց կյանքը գրական կերպարների հետ,
* ձգտեն կատարել իրենց ընկալած բարոյական նորմերին համապատասխան արարքներ:

Ընթերցելով և վերլուծելով ստեղծագործությունները՝ երեխան պետք է խորհի ճշմարտի և սխալի, բարու և չարի, սիրո և ատելության, մարդու հնարավորությունների և աշխարհում նրա տեղի մասին: Կյանքում նշված խնդիրների լուծմանը էապես կնպաստի գրական ստեղծագործությունների ինքնուրույն ընթերցմանը, իսկ ուսուցիչը ուղղորդողի դեր կկատարի այդ գործընթացում:

Գրականությունն այսօր և որպես

	հասարակության հոգեբարոյական կյանքի գոյության փաստ, և որպես դպրոցական առարկա այն բարոյական հիմքն ու մաքուր ակունքն է, որը սնում է մարդկանց հոգևոր աշխարհը: Բարոյական համոզմունքները բուռն կերպով են ձևավորվում մանկական տարիքում: Սա նշանակում է, որ հատկապես դպրոցում պետք է արթնացնել , իսկ հետո նաև ձևավորել ընթերցանության նկատմամբ երեխաների հետաքրքրությունն ու սերը, զարգացնել գեղեցիկի , գրական խոսքի խորության ընկալման կարողությունը և դրա բարոյական ներգործության ուժը:Սովորողը պետք է հասկանա իրեն ուղղված խոսքը, համապատասխան արձագանք տալ լսածին՝ արտահայտելով իր կարծիքը կամ վերաբերմունքը:
Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար	ԳՐԱԿԱՆ ՈՒՆԿՆԴՐՄԱՆ ԴԱՍԵՐՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ Տարրական դասարանների սովորողների խոսքի զարգացման համար անհրաժեշտ երեք բաղադրիչների՝ բառապաշարի հարստացման ու կատարելագործման, խոսքի արտահայտչականության՝ առոգանության պահպանման և լավ պատմելու կարողության մշակման աշխատանքները պետք է իրականցնել միաժամանակ, միմյանց հետ սերտորեն կապված:

Վերոհիշյալի լավագույն միջոցը կապակցված խոսքն է՝ երեխաներին խոսեցնելը, տեսածի, լսածի և զգացածի մասին պատմելը:Խոսելու, արտահայտվելու կամ պատմելու ընթացքում որոշակիորեն դրսևորվում է երեխայի բառապաշարը, խոսքի արտահայտչականությունն ու պատմելու կարողությունը, այն, ինչ թերի է, ուսուցիչն ուղղում, շտկում ու կատարելագործում է կոնկրետ լեզվական նյութի վրա: Ասել է թե՝ ընթերցված նյութի վերարտադրության առաջին փուլը անմիջականորեն առնչվում է կարդալու ուսուցման տեխնիկային: Կարդալու կարողության շնորհիվ է զարգանում պատմելու մեթոդիկան, քանի որ ընթերցանության դասերին ամենակարևորը կարդացածը հասկանալն է:

Առաջին դասարանում գրական ունկնդրման նյութ կարող են դառնալ հեքիաթը, բանաստեղծությունը և այլն: Օրինակ բոլոր երեխաներն էլ սիրում են հեքիաթներ լսել ու կարդալ:Հեքիաթի բովանդակության հետաքրքրաշարժությունը, դեպքերի զարգացման հաջորդականությունը, հերոսների բնավորության գծերի հստակությունը, հաճախակի կրկնվող սկիզբն ու բազմաթիվ արտահայտությունները, հաճելի ավարտը, մատչելի գաղափարն ու ենթատեքստը հեշտացնում են հեքիաթի ընթերցումն ու այն դարձնումն ցանկալի:

Բացի դրանից՝ մեծ է հեքիաթի դաստիարակչական նշանակությունը: Այն ներկայացնում է բարոյական արժեքներ ու սկզբունքներ, որոնք ներկայացվում են ոչ թե որպես խրատ ու քարոզ, այլ արտահայտվում են հերոսների արարքներով, խոսքերով: Հենց այդ հանգամանքն էլ ուժեղացնում է երեխայի հոգու, զգացմունքների ու համոզմունքների վրա թողնվող ազդեծությունը:

Հեքիաթը կարևոր տեղ ունի ոչ միայն առաջին դասարանի, այլև առհասարակ տարրական դասարանների մայրենի լեզվի ընթերցարաններում, քանի որ հեքիաթն ունի դաստիարակչական մեծ արժեք, այն միևնույն ժամանակ կապակցված խոսքի զարգացման արդյունավետ միջոց է: Այս առումով հեքիաթի ունկնդրումը նպատակաուղղված նշանակություն է ստանում: Գրական ունկնդրման միջոցով երեխան ըմբռնում է բարու և չարի գործոնը ոչ միայն հեքիաթում, այլև կյանքում, առօրյայում:

Հեքիաթի վերջում բարու հաղթանակը կոգևորի նրան՝ կատարելու բարի գործեր և հասկանալու, որ հաղթանակի բերկրանքը հեշտությամբ չի տրվում: Այսինքն հեքիաթը պետք է մեկնաբանվի, իմաստավորվի իրենց իսկ կյանքի օրինակով:

Հեքիաթը երեխային օգնում է խորասուզվել մտքերի ծովը, կենդանի մտապատկերներով վերամարմնավորել բնության անսովոր ու

հանդիսավոր երևույթները, առեղծվածային ուժերը և ներմուծել դրանք երկրային իրական կյանք: Հեքիաթի միջոցով երեխան հստակեցնում է աշխարհի կերպարն իր մտապատկերում ու հոգում, որոշում իր տեղն ու դերը այս աշխարհում: Այդ հարցում նրան օգնում է ուսուցիչը: Նա պետք է ուղղորդի երեխային մտքի ու հոգու ճանապարհով: Հեքիաթի միջոցով երեխան հասկանում է, որ թագավորն էլ կարող է բարի, ազնիվ ու իմաստուն լինել, աղքատն էլ, որը կուշտ աչք, բարեսիրտ ու նախանձ չէ: Նա լուռ կրում է իր տառապանքները: Չարիքի դեմ վրեժով լցված չէ:

Հեքիաթի միջոցով երեխան գիտակցում է այն հանգամանքը , որ ոչ աղքատությունը, ոչ որբությունը, ոչ ձախորդությունը արատներ չեն: Հարկավոր է երեխային բացատրել և ցույց տալ այդ երևույթները՝ իրական կյանքի օրինակներով, առանց վերեմբարձ խտրականության: Այդ կերպ են վեր հանում հեքիաթի բարոյախոսությունը:

Չարին հաղթելու համար մարդն օգնության է կանչում իրենից դուրս գտնվող բնության ուժերին: Գերմարդկային ուժերը հրաշագործ են: Երեխան պետք է ճանաչի բնության երևույթները, ընկալի բնության կերպարանափոխության զորությունը:

Իրապատում հեքիաթն անդրադարձ է մարդու կողմից մարդկային հարաբերություններին,

մարդկային հասարակության ճանաչողությանը դիտարկման, հոգեբանական վերլուծության և կենսափորձի կերպավորման միջոցով: Իրապատում հեքիաթի մեջ գերեկշռում է մարդու մեջ առկա հրաշագործ ուժերի հնարքը:

Նման հեքիաթների մեջ պետք է ցույց տալ, որ հրաշքը ոչ թե բնության տարերային ուժերի մեջ է թաքնված,այլ մարդու ներքին ուժերի և հնարավորությունների:

Այսպիսով՝ հեքիաթի ունկնդրումը առաջին դասարանում շատ կարևոր է այն առումով, որ երեխայի միտքը մաքուր է, ուստի նրան հասու են բոլոր հեքիաթային, երկնային ու երկրային գանձերը: Երեխան հավատում է հրաշքին: Հեքիաթի ունկնդրումը առաջին դասարանում սովորաբար ուղեկցվում է չորս քայլով.

1. Հեքիաթի ընթերցում՝ բովանդակության ամբողջական ընկալմանն նպատակով,
2. Հեքիաթի երևակայական կողմի բացահայտում
3. Հեքիաթի բարոյախոսական իմաստի վեր հանում
4. Հեքիաթի լեզվի վերլուծություն

Հեքիաթի ուսումնասիրությունը իրականցվում է ինչպես պատմվածքինը, այսինքն որպես գրական ստեղծագործություն: Սա նշանակում է՝ դասը պիտի իրականացվի բացատրական ընթերցանության մեթոդի բոլոր բաղադրամասերի կիրառմամբ:

Բացատրական ընթերցանության մեթոդի

բոլոր բաղադրիչներով հեքիաթը ուսումնասիրելուց հետո պիտի անցնել բովանդակության երևակայական կողմի բացահայտմանը: Սակայն, նշենք, որ այդ ամենը չպետք է բացահայտ կերպով անել, այլապես հեքիաթը կդադարի նպաստել երեխաների երևակայության բացահայտմանը: Նախ անհրաժեշտ է, որ երեխաներն իրենք որոշեն, թե իրենց կարդացած կամ լսած հեքիաթում նկարագրված դեպքերից որոնք կարող են կատարվել իրականում, որոնք անիրական են, մտածածին և այլն:

Հեքիաթի շուրջ տարվող աշխատանքների շրջանում պետք է կարևորել հերոսների այն արարքները, որոնց շուրջ զարգանում են հեքիաթի դեպքերը: Դրանց միջոցով են որոշվում գլխավոր հերոսի արարքների դրդապատճառները, հեքիաթի տրամաբանությունն ու գլխավոր գաղափարը:

Այսպիսի վերլուծության արդյունքը պետք է դառնա հեղինակի դիրքորոշման ըմբռնումն ու ընթերցողի վերաբերմունքի ձևավորումը ընթերցածի բովանդակության նկատմամբ: Հիմք ընդունելով բովանդակային բաղադրիչները՝ անհրաժեշտ է նախ երեխաների ուշադրությունը հրավիրել որոշակի բառերի ու արտահայտությունների վրա, քանի որ բառերի միջոցով է առաջին հերթին հնարավոր որոշել հերոսի հոգեվիճակը, նրա արարքների

դրդապատճառները, հերոսի ինչպիսին լինելը, հեղինակի վերաբերմունքը նրա նկատմամբ և այլն: Օրինակ՝ <<Աղվեսն ու արագիլը>> հեքիաթն ընթերցելիս կարելի է տալ հետևյալ հարցը՝ թե ինչու՞ այդպես վարվեց արագիլի հետ /ճաշը լցրեց տափակ պնակի մեջ /: Սովորողներին օգնելու համար կարելի է տալ պատասխանների խումբ՝ թողնելով, որ նրանք ընտրեն իրենց համար ընդունելի պատասխանը:

Հաջորդ խնդիրը, որ պետք է կարևորվի հեքիաթի ուսուցման ժամանակ , նրա ժանրային առանձնահատկությունների շուրջ տարվող աշխատանքն է: Մի քանի հեքիաթների լեզուն, ժանրային առանձնահատկությունները համեմատելով՝ կարելի է նրանց միջև ընդհանրություններ ու տարբերություններ գտնել, երեխաների ուշադրությունը հրավիրել հեքիաթի կառուցվածքային առանձնահատկությունների, մասնավորապես հեքիաթի սկզբի, վերջի վրա:

Հեքիաթը պատմել սովորեցնելիս կարելի է օգտագործել նաև ուսուցչի և սովորողների կազմած նկարներով պլանը:Սա պատմելու ուսուցման շրջանի առաջին փուլն է: Հեքիաթի վերարտադրումը կարելի է իրականացնել ինչպես շարունակելով, այնպես էլ ընտրովի, շարքերով, խմբերով, դերերով և այլն: Պետք է հանձնարարել, որ երեխաները անգիր սովորեն այն չափածո տողերը , որոնք հաճախ կրկնվում

են հեքիաթներում, և պատմելիս անգիր արտասանեն դրանք:

Գրական ունկնդրման ժամերին կարող է դիտարկվել հարցերի հետևյալ շրջանակը.

1. Ի՞նչ տեսար:
2. Ի՞նչ զգացիր:
3. Ինչպե՞ս է սկսվում ստեղծագործությունը:
4. Ինչպե՞ս է ավարտվում ստեղծագործությունը:
5. Ինչու՞ է ստեղծագործության հերոսն այդպես վարվում:
6. Ինչպե՞ս կվարվեիր դու այդ դեպքում:
7. Ինչպե՞ս կվերնագրեիր ստեղծագործությունն այլ ձևով:
8. Ինչու՞ է ստեղծագործությունը վերնագրված այդպես:
9. Նշիր ստեղծագործության դրական հերոսներին:
10. Նշիր ստեղծագործության բացասական հերոսներին:
11. Ստեղծագործության ո՞ր հերոսի արարքներն են արդարացված:
12. Ստեղծագործության ո՞ր հերոսն է սխալ գործում:
13. Ինչպե՞ս կգնահատես հերոսի արարքը:
14. Ո՞րն է ստեղծագործության այս հատվածի հիմնական գաղափարը:
15. Ո՞րն է ամբողջ ստեղծագործության գաղափարը:
16. Մարդկային ինչպիսի՞ հատկանիշներ կվերագրեք ստեղծագործության հերոսին:

17. Ի՞նչ բառերով կնկարագրեք հերոսին:
18. Ի՞նչ բառերով կնկարագրեք բացասական հերոսին:
19. Ինչու՞ նման ձևով վարվեց հերոսը:
20. Ի՞նչ կանեիր դու նման պարագայում:
21. Ստեղծագործության ո՞ր հերոսին կօգնեիր և ինչու՞:
22. Ինչպե՞ս կշարունակեիր ստեղծագործությունը:
23. Ստեղծագործության ո՞ր հատվածը քեզ դուր եկավ:
24. Ստեղծագործության ո՞ր հատվածը քեզ դուր չեկավ:
25. Ի՞նչ հերոս կավելացնեիր ստեղծագործության մեջ:
26. Վերնագրիր ստեղծագործության առաջին հատվածը:
27. Վերնագրիր ստեղծագործության երկրորդ հատվածը:
28. Վերնագրիր ստեղծագործության երրորդ հատվածը:
29. Խմբով նկարագրեք ստեղծագործության հերոսներին:
30. Խմբով գնահատեք հերոսների արարքները:
31. Առանձնացրեք ստեղծագործության դրական և բացասական հերոսներին:
32. Ստեղծագործության հիմնական գաղափարը ներկայացրեք մեկ նախադասությամբ:
33. Ստեղծագործության ո՞ր հատվածում է հեղինակի հիմնական ասելիքը:
34. Մեկ բառով նկարագրիր ստեղծագործության դրական հերոսին:

35. Մեկ բառով նկարագրիր ստեղծագործության բացասական հերոսին:
36. Ի՞նչ կավելացնեիր կամ կփոխեիր նշված ստեղծագործության մեջ:
37. Ինչպե՞ս կներկայացնես հեղինակի ասելիքը:
38. Ի՞նչ կանեիր նշված հերոսին օգնելու համար:
39. Ո՞ր հերոսը սխալ արարք կատարեց:
40. Ո՞ր հերոսը ճիշտ վարվեց:
41. Ո՞ր հերոսի արարքը քեզ ամենից շատ դուր եկավ:
42. Ո՞ր հերոսին կդատապարտեիր կատարած արարքի համար:
43. Ո՞ր հերոսին կներեիր:
44. Ո՞ր հերոսին կփոխեիր:
45. Հերոսի ո՞ր հատկանիշն է ամենալավը:
46. Ինչու՞ է մարդը սխալ գործում:
47. Արդյո՞ք հնարավոր է մարդուն փոխել:
48. Արդյո՞ք հնարավոր է սխալներից դաս քաղել:
49. Ի՞նչ կանեիր դու այդ վիճակում:
50. Ի՞նչ կզգայիր դու այդ հերոսի փոխարեն:

Հարցերի այս շրջանակը նպաստում է մտածողության զարգացմանը: Գրական ստեղծագործությունը պատմել սովորեցնելիս կարելի է օգտագործել նաև նկարներով պլան:Ստեղծագործության վերարտադրումը կարելի է իրականացնել ինչպես շարունակելով, այնպես էլ ընտրովի, շարքերով, խմբերով, դերերով և այլն:

Հեքիաթի ուսնկնդրման դասի մեթոդական

շղթան ընդգրկում է հետևյալ քայլերը.

- Նախապատրաստական զրույց հեքիաթի թեմայի շուրջ.
- Հեքիաթի ամբողջական ընթերցում.
- Հեքիաթի ընթերցում.
- Աշխատանք հեքիաթի երևակայական կողմի, հիմնական մտքի, դաստիարակչական գաղափարի բացահայտման, ենթատեքստի կռահման ուղղությամբ.
- Պատմելու նախապատրաստում, պատմում.
- Ամփոփում

Նույն հիմունքով պետք է իրականացնել գրական մյուս ստեղծագործությունների ունկնդրումը:

Մինչ ստեղծագործությանը անդրադառնալը ուսուցիչը պետք է նախապատրաստական աշխատանք տանի ուսուցանվող թեմայի վերաբերյալ: Ընթերցանությունը պետք է կատարվի բացատրական մեթոդով: Ամեն հատված ընթերցելիս ուսուցիչը անդրադառնա այդ հատվածի հիմնական գաղափարին: Այնուհետև կիրականացվի ստեղծագործության ամբողջական ընթերցում: Այսինքն՝ գրական ունկնդրումը պետք է իրականցվի փուլ առ փուլ: Յուրաքանչյուր փուլի ընթացքում պետք է առանձնացվեն ստեղծագործության մեջ արծածված հիմնական գաղափարները:

Ուսուցչի մեկնաբանությունները կարող են առանցքային դերակատարում ունենալ ստեղծագործության մեջ արծածված գաղափարների ընկալման հարցում: Այս առումով ուսուցիչը պետք է ուշադիր լինի և ճիշտ մոտեցում դրսևորի հատկապես կերպարների բնորոշման հարցում: Դրական ու բացասական կերպարների

	առանձնացումը պետք է կատարվի համապատասխան հիմնավորումներով: Սովորողները պետք է կարողանան հասկանալ յուրաքանչյուր հերոսի արարք , գնահատական տալ նրա վարմունքին: Շատ կարևոր է նաև սովորողների ուշադրությունը բևեռել ստեղծագործության կառուցվածքային մի շարք առանձնահատկությունների վրա: Ունկնդրումը երեխային հնարավորություն է ընձեռում հարստացնել ճանաչողական գործունեության հիմնական փորձը, զարգացնել տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները: Իսկ հասկանալով ունկնդրումը ակտիվացնում է մտածական գործընթացները և կարևոր նախապայման դառնում երեխաների արդյունավետ ուսուցման և ուսումնառության համար: Գրականությունն այսօր և որպես հասարակության հոգեբարոյական կյանքի գոյության փաստ, և որպես դպրոցական առարկա այն բարոյական հիմքն ու մաքուր ակունքն է, որը սնում է մարդկանց հոգևոր աշխարհը: Բարոյական համոզմունքները բուռն կերպով են ձևավորվում մանկական տարիքում: Սա նշանակում է, որ հատկապես դպրոցում պետք է արթնացնել, իսկ հետո նաև ձևավորել ընթերցանության նկատմամբ երեխաների հետաքրքրությունն ու սերը, զարգացնել գեղեցիկի, գրական խոսքի խորության ընկալման կարողությունը և դրա բարոյական ներգործության ուժը: Ունկնդրման ժամերին սովորողների բարոյական

դաստիարակության խնդիրների լուծման գլխավոր պայմանը սովորողների՝ գրական ստեղծագործությունը խորությամբ հասկանալու, վերլուծելու կարողությունն է: Մայրենի լեզվի դասերին աշակերտները ուսուցչի ղեկավարությամբ կարդում են գրական ստեղծագործություններ: Ստեղծագործական գեղագիտական և բարոյական արժեքներն ընկալելու համար անհրաժեշտ է, որ

- Խորհեն ընթերցածի շուրջ,
- Ապրումակցեն հերոսներին,
- Գնահատեն նրանց արարքները,
- Իմաստավորեն նրանց խնդիրները,
- Համեմատեն իրենց կյանքը գրական կերպարների կյանքի հետ,
- Զգտեն կատարել իրենց ընկալած բարոյական նորմերին համապատասխան արարքներ

Ուկնդրման ժամերին հիմնական խնդիրներն ու նպատակները 1-ին դասարանում հետևյալն են.

- Զևավորել և դասարանից դասարան զարգացնել երեխաների կարդալու կարողությունները
- Մաքրել, հղկել երեխաների նախադպրոցական տարիքում ձեռք բերած բառապաշարը,
- Զևավորել հաղորդակցական կարողություններ, բարեկիրթ խոսքի մշակույթ,
- Զևավորել փոքրածավալ տարաբնույթ ստեղծագործություններ ընթերցելու, դրանց հիմնական գաղափարն ընկալելու, հերոսների գործողությունների տրամաբանությունն ընկալելու, պարզ դատողություններ անելու կարողություններ:
- Գեղարվեստական նյութի ընթերցման, լեզվական տարրական գիտելիքների ու կարողությունների ձեռքբերման

	ճանապարհով ձևավորել հայեցի մտածողություն, ազգային հոգեկերտվածք, զարգացնել լեզվամտածողությունը, վերլուծական և քննադատական մտածողությունը:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Լեզվական գրագիտություն և կարողունակություն
Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին	Առարկայի մեթոդաբանություն

Պարագրաֆներ/մասեր

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, ● Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից:	Հեքիաթը կարևոր տեղ ունի ոչ միայն առաջին դասարանի, այլև առհասարակ տարրական դասարանների մայրենի լեզվի ընթերցարաններում, քանի որ հեքիաթն ունի դաստիարակչական մեծ արժեք, այն միևնույն ժամանակ կապակցված խոսքի արդյունավետ միջոց է: /Ջ. Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական մեթոդիկա, Երևան, 2006թ. էջ 160/

	Աշակերտը պետք է հանդես գա որպես ուսուցման գործընթացի ակտիվ մասնակից, ինքնուրույն այդ ոլորին անցնելու պատրաստ անձնավորություն: /Ջ. Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006թ. էջ116-117
Օգտագործված մեթոդները, գործիքները	Դիտարկում Դիտարկմանը մասնակցում էին 10 սովորող: Առաջին անգամ երբ եղանք գրադարանում սկզբում նրանցից մեծ մասը ուշադիր չէր: Հետո երբ ընթերցեցին իրենց ծանոթ հեքիաթը ,, Կարմիր գլխարկը,, սկսեցին հետաքրքրություն ցուցաբերել:Հարցերի միջոցով վեր էինք հանում հեքիաթի իմաստը:Հետո հանձնարարվեց նկարել այն: Երբ երկրորդ անգամ գնացինք գրադարան արդեն իրար հերթ չտալով պատմում էին իրենց իսկ հորինած հեքիաթը: Պատմում էին հասկանալով ,առոգանությամբ, դերերով : Այս անգամ արդեն զգացվում էր խոսքի կարողությունների զարգացում:
Իրականացման ժամանակահատվածը	01.09 - 25.09. 2022 թ
Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	34սովորող 16 տղա, 18 աղջիկ

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Գրական ունկնդրումը անձի զարգացման, մտածողության, նրա արժեքային համակարգի գործում մեծ դեր է կատարում: Գեղարվեստական ստեղծագործությունների հերոսների արարքների, դատողությունների վերլուծությունը, ներկայացնելը, դպրոցականների մեջ կարևոր ազդակ է դառնում որոշակի արժեքների ստեղծմանը: Ընթերցած ստեղծագործության մեջ կերտված կերպարների գործունեությունը, նրանց զգացմունքային ապրումները սերտորեն առնչվում են ինչպես աշակերտի ինքնաարտահայտման, այնպես էլ ուսումնական-ստեղծագործական գործունեության հիմքերին: Ունկնդրման ժամերի պարբերաբար լսումներն ու քննարկումները ցույց են տալիս, որ գեղարվեստական բնագրի ընթերցումը պետք է կազմակերպվի որոշակի մեթոդներով, որպեսզի անարդյունավետ և ձանձրալի չլինի: Կապակցված բնագրի ընթերցումը ևս իր առանձնահատկություններն ունի, որովհետև այստեղ տառի, վանկի ու բառի փոխարեն ընկալման միավորներ են դառնում

ամբողջական նախադասությունները, որոնց ընկալումն ու միմյանց հետ կապակցումը երեխայի համար լուրջ դժվարություն է ներկայացնում: Նախադասության ընթերցումը ևս իր առանձնահատկությունն ունի և այն որոշակի դժվարություն է ներկայացնում երեխաների համար: Նախադասության մեջ մտնող բառերի միջև եղած փոխադարձ կապվածությունը երեխաներին գիտակցել տալու համար պետք է կարդալուց հետո նրա վերաբերյալ հարցեր տալ:

Ընթերցելու մեթոդիկայի ճիշտ ընտրությունը նպաստում է կապակցված խոսքի զարգացմանը: Կապակցված խոսքի ստեղծումը խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների բարձրակետն է, որովհետև այդ ուղղությամբ տարվող աշխատանքների վերջնական նպատակը սովորողների մեջ կապակցված խոսք ստեղծելու կարողության ձևավորումն է: Խոսք կառուցելու մշակման տեսակետից օգտակար են ինքնուրույն ընթերցանությունն ու դրան հաջորդող փուլը՝ պատմումը, որը հնարավոր է իրականացնել նույնիսկ դասագրքում եղած թեմատիկ նկարների շուրջ կապակցված պատմությունների ստեղծման, տեսածի ու լսածի, զգացածի ու խորհածի վերարտադրման միջոցով: Այս բոլոր դեպքերում երեխաներն ստիպված են

	լինում կապակցված ձևով ու որոշակի համակարգով ընթերցել ու խոսք կառուցել: Ուսումնասիրվող յուրաքանչյուր նյութ սովորողների կողմից պետք է ամբողջությամբ վերարտադրվի, որպեսզի նրանք սովորեն նյութի հաջորդականությունը պահպանել, հետևել դեպքերի ու դեմքերի տրաբանական զարգացմանը, կարողանան կապակցված ու ավարտուն խոսք ասել: Առաջին դասարանում գրական ունկնդրումները ցույց են տալիս, որ գեղարվեստական բնագրի ընթերցումը պետք է կազմակերպվի որոշակի մեթոդներով, որպեսզի լինի արդյունավետ և ոչ ձանձրալի: Սովորաբար ընթերցանության մեթոդի բաղադրատարրեր են դառնում՝ • Զրույցը • Բնագրի ընթերցումը • Բառային աշխատանքը • Պատմումը • Ամփոփումը Սովորողների ընթերցման գնահատումը պայմանավորված է ձեռք բերած որակական հատկանիշներով, որոնցով պայմանավորված է լավ ընթերցանությունը: Այդ որակներն են • Ճիշտ կամ անսխալ կարդալը • Հասկանալով կամ գիտակցորեն կարդալ • Վարժ կամ սահուն կարդալ • Արտահայտիչ կամ գեղարվեստորեն

կարդալ

- Արագ կարդալ

Ցանկացած ընթերցանություն նպատակային է և գիտակցական, եթե ընթերցանության ժամանակ սովորողների մեջ ծագում է տարաբնույթ վարկածներ այն մասին, թե ինչ է ինքը կարդալու և ձգտում են հասկանալ, թե ինչի մասին է խոսքը գնալու: Ընթերցանության ընթացքում, երբ սովորողը կարդում է, նա << իր վրա է վերցնում>> կարդացածն իմաստավորելու, նրա մեջ գաղափար դնելու առաջատար դերը: Նշված գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է ինչպես սովորողի ունեցած գիտելիքների պաշարով, այնպես էլ ուսուցչի գործոնով, նրա օգնությամբ:

Այսպիսով՝ ինքնուրույն ընթերցանությունը սովորողների ինքնուրույն ուսումնական գործունեության կազմակերպման ձևերից է, որը նպաստում է.

- Ինքնուրույն և ստեղծագործական գործնական կարողությունների զարգացմանը
- Վերլուծական հմտությունների դրսևորմանը
- Ստեղծագործական դաստիարակչական կողմի ընկալմանը
- Կրթության զարգացմանը և այլն:

Օգտագործված գրականության ցանկ

Օրինակ՝

1. Գյուլամիրյան Ջ , Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006թ.
2. Գյուլամիրյան Ջ , Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Երևան, 1998թ.
3. Գյուլամիրյան Ջ , <<Մայրենի լեզու>> դասագրքի մեթոդական ուղեցույց, Երևան, 2004թ.
4. Թորոսյան Կ , Չիբուխչյան Կ , Ընթերցանության դասաժամերի դերը ինքնուրույն գործունեության կազմակերպման և մտածողության զարգացման գործում / ,,Նախաշավիղ,, Երևան, 2010, N 6
5. Խաչատրյան Ս., Արտահայտիչ ընթերցանության և բանավոր խոսքի ուսուցումը տարրական դասարաններում, ,,Նախաշավիղ,, հանդես , Երևան, 2013թ.
6. Կանեցյան Գ . , Կապակցված խոսքի զարգացումը առաջին դասարանում, Երևան, 1990թ.
7. Մանկավարժություն, Երևան, 2007թ.
8. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա , Երևան, 1980թ.

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր

- Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ)
- Նկարներ
- Արդյունքներ